

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀՈԲԵԼՅԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Հոկտեմբերի 20-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 7-ին, Երևանի «Հայաստան» հյուրանոցի շքեղ ճաշասրահում, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անունից կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն Նորին Ս. Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի պատվին, Նրա ծննդյան հիսնամյա հոբելյանի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով։

Ընդունելությանը ներկա էին հոբելյանական հանդիսություններին մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորներն ու հյուրերը, ներքին թեմերի և թեմական խորհուրդների անդամներ, արվեստի, գրականության, մամուլի ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձնավորություններ, ավելի քան 150 հրավիրյալներ։

Հոբելյանական սեղանների շուրջ ստեղծվել էր ջերմ ու սրտագին մթնոլորտ։ Սեղանը ղեկավարում էր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։ Ավելի քան սրտահույզ և խոր հայրենասիրական էր շրջանակը։

Առաջարկվում են սրտագին կենացներ Հայրենի կառավարության և՛ ավելի հզորության և բարգավաճման, հայ շինարար ժողովրդի պայծառ ապագայի, Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության հաղթանակի համար։

Ընդունելության ժամանակ խանդավառ, հուզիչ ու հայրենասիրական ճառեր են խոսում Վեհափառ Հայրապետը, Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը, Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը, Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, բանաստեղծներ Վահե-Վահյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, պատգամավորներ և հյուրեր պր. Նուպար Կյուլպենկյանը, պր. Երվանդ Հյուսիսյանը, պր. Օգսեն Սարյանը, պր. Արսեն Կիտուրը և ուրիշներ։

Ընդունելությանը իրենց փայլուն մասնակցությունը բերեցին երգերով գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, ժողովրդական արտիստ Շարա Տալյանը, վաստակավոր արտիստուհի Օֆելյա Համբարձումյանը, վաստակավոր արտիստներ Էդվարդ Բաղդասարյանը, Հովհաննես Բաղալյանը և Թամարա Դեմուրյանը՝ իր ասմունքով։

Ավելի քան 3 ժամ տևող այս հաճելի սեղանը մի քաղցր առիթ եղավ մի անգամ ևս ապրելու Ս. Էջմիածնի խորհրդով, Վեհափառ Հայրապետի գործով, մեր պանծալի Հայրենիքի նվաճումներով և հայ ժողովրդի սիրով։